

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) լիցենզավորման գործակալությունը (այսուհետ՝ **Գործակալություն**) նախարարության կազմում գործող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ կրթության բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

2. **Գործակալությունն** ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է նախարարի որոշմամբ: **Գործակալությունը** գործում է իր կանոնադրության համաձայն:

3. **Գործակալության** լիազորությունները սահմանվում են օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. **Գործակալությունն** իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. **Գործակալությունն** օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

6. **Գործակալությունն** ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և **Գործակալության** հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

II. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. **Գործակալության** նպատակը կրթության ոլորտում լիցենզավորման գործընթացի

իրականացումն է:

Գործակալության խնդիրներն են անձանց իրավունքների, օրինական շահերի, բարքերի և առողջության պաշտպանությունը, պետության պաշտպանության և անվտանգության ապահովումը, կրթության բնագավառում գործունեության միասնական քաղաքականության և միասնական լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների ապահովումը. միասնական կարգի և սկզբունքների սահմանումը, հրապարակայնությունը, գործընթացի օրինականության ապահովումը, պարզեցումը և թափանցիկության ապահովումը, լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության պահանջների խախտման համար պատասխանատվության միասնական չափանիշների և տեսակների կիրառումը, ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփականության ձևից:

III. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Գործակալությունն իր նպատակի իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները ըստ բաժինների՝

Լիցենզավորման բաժին՝

- 1) իրավաբանական անձանց լիցենզիա տալու (մերժելու), դրանց գործողության ժամկետի երկարաձգելու, վերաձևակերպելու գործառույթների իրականացում.
- 2) կրթության ոլորտի լիցենզավորման գործընթացի փաստաթղթաշրջանառության իրականացում, այդ թվում՝ լիցենզավորման համար ներկայացված հայտերի ու դրանց կից փաստաթղթերի մուտքագրում և հաշվառում.
- 3) կրթության ոլորտում լիցենզավորման հանձնաժողովի գործավարության իրականացում, հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, ամփոփում և դրանք լիցենզավորման հանձնաժողովի քննարկմանը ներկայացում.
- 4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված սուբյեկտների մասին տեղեկությունների հավաքագրում և տրամադրում.
- 5) բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակում:

Դիտարկումների և վերլուծության բաժին՝

- 1) լիցենզավորված սուբյեկտների կողմից տվյալ կրթական գործունեությունն իրականացնելու համար սահմանված պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նպատակով

դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացում.

- 2) լիցենզիաների գործողության կասեցման, դադարեցման և վարչական տույժերի (նախազգուշացում, տուգանք) կիրառման գործառույթների իրականացում և դրանց հետ կապված կրթության ոլորտում լիցենզավորման հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, քննարկման ներկայացում.
- 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված սուբյեկտների ներկայացված հաշվետվությունների հավաքագրում, տեղեկությունների վերլուծություն և գնահատում.
- 4) լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների փոփոխման և արդիականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
- 5) բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակում :

**Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարար**